

ԽԱՉԵՆԻ ՀՈՎՏԻ ԵՎ ԿԱՉԱՂԱԿԱՔԵՐՈՂԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԼԱՆԴՆԱՖՏՆԵՐԸ*

Հենրիկ Գրիգորյան, Կարինե Բալայան

Բանալի բառեր՝ Խաչենի հովիտ, Կաչաղակաքերոլ, անտառներ, լանդշաֆտ, բնության պահպանություն, ռեկրեացիա, կրթություն, դաստիարակություն:

Կաչաղակաքերոլը գտնվում է ԼՂՀ Ասկերանի և Մարտակերտի շրջաններն իրարից բաժանող Ղարաբաղյան լեռնաշղթայի Հավթախաղաց լեռնաբազուկի վրա: Այն որպես ռեյիեֆի ձև իրենից ներկայացնում է մեզոզոյան դարաշրջանի մնացորդային կրաքարային ապարներից կազմված հսկա ժայռաբեկոր: Կաչաղակաքերոլն ունի 1915 մ - բացարձակ բարձրություն, շրջապատված է անտառներով (նկ.1): Կաչաղակաքերոլը Արցախի հրաշալիքներից մեկն է: Այն իրենից ներկայացնում է որպես բնապահպանական հուշարձան, հսկա քար կամ ժայռաբեկոր, որը շրջակա անտառի նկատմամբ ունի 50-60մ հարաբերական բարձրություն: Ժայռաբեկորն ունի նստվածքային ծագում և կազմված է կրաքարային ապարներից: Կաչաղակաքերոլը, հանդիսանալով Հավթախաղաց լեռնաշղթայի մի բազուկը, ժամանակի ընթացքում արտաքին ուժերի՝ հոսող ջրերի, ծանրահակ ուժերի ազդեցությամբ շրջակայքն էրոզացվել տեղատարվել է և միայն հարավային կողմից կապված է լեռնաշղթայի հետ, որտեղից էլ հնարավոր է բարձրանալ գագաթային անառիկ բարձունքը: Գագաթային մասում բերդի տարածքում կան բազմաթիվ կացարաններ, ժայռափոր անցքեր: Միջնաբերդի կենտրոնական մասում կառուցված է 2 վիմափոր քառանկյունի ջրավազաններ [1]:

Կաչաղակաքերոլ ամրոցից դեպի հարավ տեսանելի է Արցախի լեռնաշղթան՝ իր Քիրս գագաթով, Շուշին, Ստեփանակերտը, Խաչենի ու Կարկառի հովտի գյուղերի մի մասը,



Նկ. 1. Կաչաղակաքերոլը Խաչենի հովտից

հյուսիս - արևելյան և հյուսիսային կողմում՝ հեռվում երևում է Մեծ Կովկասյան լեռնաշղթան, իսկ Խաչեն գետի ձախ ափին գուգահեռ՝ ձգված Օխնաղբյուրի լեռնաշղթան:

Խաչենի պատմության մեջ կարևոր դեր է խաղացել Կաչաղակաքերոլը: Կաչաղակաքերոլ է կոչվում, որովհետև միայն կաչաղակները կարող են բարձրանալ նրա սրածայր գագաթը [2]:

* Հոդվածն ընդունվել է 18.12. 2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ աշխարհագրության ամբիոնը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Հավթախաղաց լեռները Ղարաբաղի լեռնաշղթայի Կուսանաց գագաթից ձգվում են դեպի հյուսիս-արևելք՝ աստիճանաբար ցածրանալով ու միանալով Խաչենի հովտին, այն ջրբաժան է հանդիսանում Խաչենի Քոլատակ վտակի և Կարկառի ավազանի միջև (նկ. 2):



Նկ. 2. *Մաշաղակաբերդ - 1915 մ, ▲Կուսանաց լեռ - 2832 մ*

Ուսանողների մոտ նոր էկոլոգիական մտածելակերպի և բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի զարգացման համար անհրաժեշտ են բնության մասին գիտելիքների հմացություն, աշխարհայացքի ձևավորում, ինչպես նաև բնական պաշարների զնահատում ու ռացիոնալ օգտագործում: Բնության պահպանությունը և նրա հարստությունների օգտագործումն անհրաժեշտ է սերտորեն զուգակցել իրար հետ: Բնությունը պահպանելու համար պետք է նրա բնական հարստությունները ճիշտ օգտագործել, այսինքն՝ միաժամանակ հոգ տանել նրանց վերականգնման, բազմապատկման ու հարստացման մասին: Քաղաքակրթության զարգացման և բնական ռեսուրսների շահագործման ավելացման հետ կապված անհրաժեշտ է պահպանել բնության ինքնավերականգնման հատկությունը:

Լանդշաֆտը բնության այն հատվածն է, որի սահմաններում բոլոր բնական բաղադրամասերը՝ ռելիեֆ, կլիմա, ջուր, հող, բուսականություն և կենդանական աշխարհ, կազմում են փոխադարձաբար կապակցված միասնություն: Լանդշաֆտն աշխարհագրական թաղանթի բնական զարգացման ընթացքում առաջացած համապատասխան տեղամաս է, որն այլ տեղամասերից որակապես տարբերվում է ներքին կառուցվածքով, տարածքային փոքր միավորներով, երևույթների սեզոնային շփոթի յուրօրինակությամբ և այլն: Լանդշաֆտները լինում են բնական, կուլտուրական, դեգրադացված [3]:

Բնական լանդշաֆտն աշխարհագրական տարածք է, որը տնտեսական ու այլ գործունեության արդյունքում չի ենթարկվել փոփոխության և բնութագրվում է տեղանքի ռելիեֆի որոշակի տիպերի, միևնույն կլիմայական պայմաններում ձևավորված հո-

դի, բուսականության համադրությամբ, իսկ մարդածին լանդշաֆտը մարդու գործունեությամբ ուժեղ փոփոխված և վերակազմավորված լանդշաֆտ է, որտեղ բնական գործընթացները հիմնականում չեն վերահսկվում, որն էլ հանգեցնում է շրջակա միջավայրի խախտմանը: Կուլտուրական լանդշաֆտները դաշտերն ու այգիներն են, այսինքն՝ կազմակերպված տարածքներ են և զարգանում են բնական օրինաչափություններին համապատասխան: Մարդու գործունեության հետևանքով բնական լանդշաֆտները փոխում են իրենց նախնական տեսքը, կազմը՝ վերածվելով կուլտուրական լանդշաֆտների: Մշակվող լանդշաֆտներում խախտվում է բնության ընդհանուր հաշվեկշիռը, որի հետևանքով լանդշաֆտի որոշ ներկայացուցիչներ ոչնչանում և անհետանում են: Այդ պատճառով, բնության պահպանությունն առաջին հերթին բնական լանդշաֆտների, նրանց առանձին տարրերի պահպանությունն է:

Անտառային լանդշաֆտներն ունեն չափազանց կարևոր նշանակություն: Անտառների ջրահավաք, ջրակարգավորիչ, հողապաշտպան ու կլիմայակարգավորիչ հատկություններն անգնահատելի են և ներկայացնում են մեծ արժեք: Անտառապատ վայրերում աղբյուրները շատ են և ջրառատ: Անտառը նպաստում է նաև ջրհեղեղների կանխմանը: Ընդհանուր առմամբ անտառային լանդշաֆտները տարածված են նախալեռնային, ստորին և միջին լեռնային գոտիներում: Անտառների ստորին սահմանն անցնում է ծովի մակերևույթից 500 մ բարձրության վրա, իսկ վերին սահմանը հասնում է մինչև 2300 – 2400 մ բարձրություն:

ԼՂՀ և հարակից տարածքներում հողաբուսական ծածկույթը, կախված բացարձակ բարձրությունների մեծ տարբերություններից, հիմնականում պայմանավորված կլիմայական և լեռնագրական գործոններով ենթարկվում է վերընթաց գոտիականության օրենքին [4]:

Խաչենի հովտում տարածվում են հետանտառային, չոր տափաստանային լանդշաֆտները, որոնք բնութագրվում են բարեխառն տաք կլիմայական պայմաններով. ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանը +25-26° է, ամենացուրտ ամսվանը՝ - 2°, մթնոլորտային տեղումների տարեկան քանակը՝ 350 - 450մմ է: Նշված տարածքի մեծ մասը հանդիսանում է Խաչենի Քոլատակ վտակի ջրահավաք ավազանը: Գետի երկարությունը 25կմ է, իսկ ջրահավաք ավազանի մակերեսը՝ 102,8կմ² [5]:

Լանդշաֆտներն ունեն օրինաչափ զոնայական տարածում, այսինքն, աշխարհագրական լայնությամբ պայմանավորված, լանդշաֆտները բնութագրող տարրերը հարթավայրերում փոփոխություն են կրում՝ հասարակածից դեպի մերձբևեռային շրջան: Կլիմայական գործոններով պայմանավորված լանդշաֆտները փոփոխվում են նաև լեռնային շրջաններում՝ ստորոտից դեպի մերձազաթային շրջան: Լեռնային շրջաններում ուղղաձիգ գոտիականությամբ պայմանավորված ընդունված է ռելիեֆը ներկայացնել հարկայնությամբ, սահմանազատելով՝ նախալեռնային, ցածր, միջին, բարձր լեռնային գոտիներ, որոնցից յուրաքանչյուրում լանդշաֆտատեսողժ գործոնները (կլիմայական, հողային, բուսական և այլն) տարբեր են:

Ուսումնասիրված տարածքում տիրապետում են լեռնաանտառային լանդշաֆտները, որտեղ կլիմայական պայմանները բարեխառն մեղմ անտառային են: Ամենատաք ամսվա օդի միջին ջերմաստիճանը 24 - 25° է, հունվարյանը՝ – 3°, մթնոլորտային տեղումների տարեկան քանակը՝ 450-550 մմ է [6]:

Հավթախաղաց լեռնաշղթայի հյուսիսահայաց լեռնալանջերին տարածվում են լայնատերև անտառները, որտեղ գերիշխում են կաղնին (*Quercus*), հաճարենին (*Fagus*), բոխին (*Carpinus*): Փշատերև բույսերից տարածված են գհիին (*Juniperus*), կենին (*Taxus*): Բավականին ընդարձակ տարածքներ են զբաղեցնում կաղնու, բոխու և հա-

ճարենու անտառները: Ուսումնասիրված տարածքում հանդիպում են նաև ռելիկտային կամ մնացորդային բույսեր՝ կենի հատապտղային (*Taxus baccata*), բաղեղ սովորական (*Hedera helix*), սոսի արևելյան (*Platanus orientalis*), խաղող անտառային (*Vitis silvestris*) և այլն, որոնք նույնպես պահպանության կարիք ունեն:

Անտառները կատարում են կյանքի գոյության պահպանման համար անհրաժեշտ էկոլոգիական ֆունկցիա: Բուսական պաշարների շարքում ամենակարևոր դերը պատկանում է անտառներին: Անտառային համակեցությունն իր մեջ ընդգրկում է տվյալ տարածության վրա աճող բոլոր բույսերը, որոնք առաջացնում են ծառերի, թփերի, խոտաբույսերի, մամուռների ու քարաքոսերի շարահարկերը: Ծառերի շարահարկը կազմված է գերիշխող կամ անտառ կազմող հիմնական տեսակներից՝ էդիֆիկատորներից ու ստորադաս տեսակներից: Գերիշխող տեսակները խոշոր, լուսասեր, դիմացկուն ծառերն են, որոնք ունեն տարածման մեծ արեալ: Ստորադաս կամ ուղեկցող տեսակները համեմատաբար սովորատար են, խոնավասեր, հիմնականում զբաղեցնում են անտառի երկրորդ շարահարկը և ծառակազմում հանդես են գալիս որպես խառնուրդ: Անտառանյութը հուճք է թղթի, սպիրտի արտադրության համար, օգտագործվում է արդյունաբերական շինարարության, կահույքի, երաժշտական ու այլ գործիքների արտադրության մեջ, իսկ պտուղներից, ծաղիկներից, կեղևից ստանում են դաբաղանյութեր, ներկանյութեր, վիտամիններ, համեմունքներ և այլն:

Անտառային բուսականության բազմազանության և նշանակության մասին ուսանողներին անհրաժեշտ գիտելիքներով ապահովելու համար ներկայացնում ենք մեր կողմից ուսումնասիրված տարածքների բուսատեսակները: Նշված տարածքների անտառային գոտում անտառկազմող հիմնական ծառատեսակներն են՝ Կաղնի խոշորառեզ (*Quercus macranthera*), Կաղնի վրացական (*Quercus iberica*), Հաճարենի արևելյան (*Fagus orientalis*) և Բոխի կովկասյան (*Carpinus caucasica*): Ուղեկցող ծառատեսակներից են Բոխի արևելյան (*Carpinus orientalis*), Տանձենի սիրիական (*Pyrus syriaca*), Հացենի սովորական (*Fraxinus excelsior*) և այլն: Անտառային դենդրոֆլորայի կազմում արժեքավոր և հեռանկարային են վայրի պտղատուները՝ Սալորենի սովորական (*Prunus divaricata*) Զկեռենի գերմանական (*Mespilus germanica*), Խնձորենի արևելյան (*Malus orientalis*), Սզնի արևելյան (*Crataegus orientalis*), Ս. կովկասյան (*C. caucasica*), Ս. հնգավարսանդ (*C. pentagyna*), Մոշենի սովորական (*Rubus caesius*), Մասրենի սովորական (*Rosa canina*), Մասրենի վրացական (*Rosa iberica*) և այլն: Տեսակային կազմով գերակշռում են հետևյալ զեդերը՝ մասրենի (*Rosa*), մոշենի (*Rubus*), ալոճենի (*Crataegus*) և այլն [7]:

Անտառներից հավաքվում է մեծ քանակությամբ բարձրարժեք պտուղներ, որոնք վիտամինների, հանքային տարրերի և մի շարք այլ նյութերի պարունակությամբ զգալիորեն գերազանցում են մշակովի սորտերի պտուղներին: Անտառներից մթերվում են ընկույզ, տխիլ, գկեռ, հոն, սզնի, տանձ, խնձոր, մասուր և այլն, որոնք օգտագործվում են թարմ կամ վերամշակված վիճակում: Պտղատու տեսակներն օգտագործվում են նաև որպես արժեքավոր պատվաստակալներ, իրենց դիմացկունության ու երկարակեցության շնորհիվ:

Խաչենի հովտի և Կաչաղակաբերդի հարակից տարածքներում անտառային բուսականության կազմում կարևոր տեղ են զբաղեցնում նաև աշնանային և գարնանային որոշ էֆեմերոիդներ (նկ. 3): Աշնանային էֆեմերոիդներից լայն տարածում ունի Քրքում հրաշալին (*Crocus speciosus*), իսկ գարնանային էֆեմերոիդներից տարածված են Գնաթբուկ գարնանային (*Primula veris*), Գ. սովորական (*P. vulgaris*), Սնդրուկ բժշկական (*Polygonatum officinalis*), Մկնասոխ սիբիրական (*Scilla sibirica*), Աստղաշուշան հայկական (*Ornithogalum armeniaca*), Պապլոր կովկասյան (*Muscari caucasica*), Հիրիկ ցանցա-

վոր (*Iris reticulata*) տեսակները, որոնք ունեն գեղազարդային և դեղատու նշանակություն: Սնդրուկը և աստղաշուշանն ունեն նաև սննդային նշանակություն [8]:



Նկ. 3. Գնարբուկ գարնանային

Անտառը նաև ապաստան է մի շարք վայրի կենդանիների համար և ուսումնասիրված տարածքի անտառներում հանդիպում են կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչներ՝ մացառախոզը, նապաստակը, աղվեսը, գայլը, կզաքիսը, թռչուններից՝ մայրահավը, անտառային կաչաղակը, բուն, բազեն և այլն: Թռչունները, սնվելով անտառային տարբեր պտուղներով, տարածում են դրանց սերմերը և նպաստում են անտառների պահպանմանն ու ընդարձակմանը: Ուստի այսօր շատ կարևոր է Լեռնային Ղարաբաղի կենդանատեսակների պահպանությունը և մարդածին գործունեների բացասական ազդեցությունների նվազեցումը, ինչպես նաև բնակչության էկոլոգիական ու էսթետիկական դաստիարակության կազմակերպումը [9]:

Բույսերի, առանձնապես՝ ծառերի ու թփերի բազմազանությունը, մարդկության կենսակայունության և այս կամ այն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական երաշխիք է: Նրա տեսակային և քանակական հարստությունից է կախված նաև ժողովրդի բարեկեցությունը և կայուն զարգացման ապահովումը: Բնության պահպանվող տարածքների միջոցով իրականացվում են բնապահպանական և սոցիալական այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են՝ ա) շրջակա միջավայրի ջրապաշտպան, կլիմայակարգավորիչ, հակաէրոզիոն, անտառապաշտպան և այլ գործունեություն, բ) ռեկրեացիոն ռեսուրսների պահպանություն և կայուն օգտագործում, գ) էկոլոգիական կրթություն և դաստիարակություն [10]:

Երիտասարդ սերունդների կրթության և դաստիարակության գործում մեծ նշանակություն ունեն բնության ու շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ տեսական, գործնական գիտելիքները, որոնք սեր կառաջացնեն Արցախյան բնության հանդեպ:

Հետևաբար, բնության, նրա բաղադրիչների և պատմամշակութային հուշարձանների ճանաչողության նպատակով պետք է ապահովել ուսանողների էկոլոգիական կրթության ու իրազեկության բարձրացումը:

Անտառների առողջապահական և ռեկրեացիոն նշանակությունը մեծ է քաղաքներում, արդյունաբերական կենտրոններում: Կանաչ զանգվածները, առանձնապես փշատերևները, օդը մաքրում են փոշուց և զանազան ախտածին մանրէներից, թուլացնում աղմուկը և զգալիորեն նվազեցնում ածխաթթու գազի քանակությունը: Օդի հարաբերական բարձր խոնավությունը, մեղմ հովը և աղմուկի բացակայությունն ամռան ամիսներին անտառը դարձնում են բնական ռեկրեացիոն ամենալավ միջավայրը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Մեր հանրապետության հարուստ բուսածածկույթի պահպանության հարցերը բավարար լուծելու համար անհրաժեշտ է ճանաչել բուսական համակեցությունները, դրանց բաղադրիչ տարրերը, գնահատել պահպանության վիճակը և հեռանկարները:

Այդ հիմնավորմամբ՝ Խաչենի հովտի և Կաչաղակաբերդի հարակից տարածքների անտառային լանդշաֆտների պահպանությունը խիստ արդիական է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բարխուդարյան Մ., Արցախ, Եր., 1996, էջ 127:
2. Մկրտչյան Շ. Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Եր., 1985, էջ 24:
3. Վարդանյան Ժ. Հ., Սայադյան Հ.Յ., Անտառագիտական և կանաչապատման տերմինների հայերեն – ռուսերեն - անգլերեն բացատրական բառարան, Եր., 2008, էջ 15:
4. Մնացականյան Բ.Պ., Առաքելյան Յու.Ա., Լեռնային Ղարաբաղի հանրապետության ու հարակից տարածքների ջրագրությունը և ջրային հաշվեկշիռը, ԵՊՀ, Եր., 2005, էջ 22:
5. Պողոսյան Դ. Ա., Խոյեցյան Ա. Վ., Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտները և ֆիզիկաաշխարհագրական շրջանները, Եր., 2008, էջ 11:
6. Պողոսյան Դ. Ա., Խոյեցյան Ա. Վ., նշված աշխատանքը, էջ 177:
7. Բալայան Կ. Վ., Լեռնային Ղարաբաղի ֆլորան (անոթավոր բույսեր), կենս. գիտ. թեկնածուական ատենախոսություն, Եր., 2014, էջ 21:
8. Բալայան Կ. Վ. նշված աշխատանքը, էջ 59 – 62:
9. Հայրապետյան Վ. Տ., Յավրույան Է. Գ. և ուրիշներ, Ղարաբաղի կենդանիների Կարմիր գիրք (Ողնաշարավորներ), Եր., 2012, 301 էջ:
10. Հայրապետյան Է. Մ., Վարդանյան Ժ. Հ., Շրջակա միջավայրի պահպանություն, Եր., 2005, էջ 194 - 195:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Խաչենի հովտի և Կաչաղակաբերդի հարակից տարածքների անտառային լանդշաֆտները Հենրիկ Գրիգորյան, Կարինե Բալայան

Հոդվածում ներկայացվում են Խաչենի հովտի և Կաչաղակաբերդի հարակից տարածքների անտառային լանդշաֆտների ուսումնասիրության վերաբերյալ 2012 – 2015 թվականների ընթացքում մեր կողմից իրականացված գիտական հետազոտությունների արդյունքները: Անտառների առատությամբ ու բնույթով է որոշվում յուրաքանչյուր երկրի բնության հարստությունը: Բնության պահպանությունը բարձր հիմքերի վրա դնելու համար պետք է ճանաչել բնությունը և նրա օրինաչափությունները: Մեր կողմից առաջարկվում է Խաչենի հովտի և Կաչաղակաբերդի հարակից տարածքների անտառային լանդշաֆտների պահպանության համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ:

РЕЗЮМЕ

**Лесные ландшафты долины Хачена и прилегающих территорий Качахакаберда
Генрих Григорян, Карине Балаян**

Ключевые слова: долина Хачена, Качахакаберд, леса, ландшафт, охрана природы, рекреация, образование, воспитание.

В статье представлены результаты научных исследований ландшафтов долины Хачена и прилегающих территорий Качахакаберда, проведенных в 2012 -15 гг. Одним из критериев природного богатства для каждой страны является обилие лесов. Чтобы достичь высокого уровня охраны природы, необходимо познавать природу и ее закономерности. Нами предлагается создать необходимые условия для сохранения лесных ландшафтов долины реки Хачен и прилегающих территорий Качахакаберда.

SUMMARY

**The wood landscapes of the Khachen valley and the surrounding territories of
Kachaghakaberd
Henrikh Grigoryan, Karine Balayan**

Keywords: the valley of Khachen, Kachaghakaberd, woods, landscape, nature protection, recreation, education.

The article deals with the results of scientific researches carried out in 2012-15 in the Khachen valley landscapes and the surrounding territories of Kachaghakaberd. The abundance of woods is one of the criteria of country's natural wealth. To reach the high level of nature protection, it is necessary to study the nature and its regularity. We suggest creating necessary conditions for preservation of wood landscapes of the river Khachen valley and the surrounding territories of Kachaghakaberd.